ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հուլիսի 2016թ. թիվ 206-Ա

Է.ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, 112 և 130 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հաշվի առնելով Է.Սահակյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Էդուարդ Սահակյանին ազատել «ՀՀ Լոռու մարզի Լեջանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից 2016թ. հուլիսի 13-ից և լուծել նրա հետ 2015 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Լեջանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Էդուարդ Սահակյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հուլիսի 11
ք.Վանաձոր